ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԴԱՐԱՆՔԻ ՆՄՈՒՇՆԵՐ ՏԻԿՆՈՒՆԻ ԱՄՐՈՑԻՑ

Ա. Ս. ԺԱՄԿՈՉՅԱՆ

Մինչև վերջերս գիտության մեջ տիրապետող էր այն կարծիքը, թե մոնղոլների 1236 թ. արշավանքով հիմնահատակ ավերվեցին Հայաստանի ծաղկուն քաղաքները, այդ թվում նաև Դվինը[1]։

Սակայն վերջին տարիների պեղումները միջնադարյան բնակավայրերում՝ Դվինի միջնաբերդի հարավային բուրգի, Տիկնունի ամրոցի և քաղաքի այլ հատվածներում, ցույց են տալիս, որ կյանքը այնտեղ շարունակվել է նաև հետմոնղոլական շրջանում, որը և հնարավորություն է ընձեռում վերստին անդրադառնալու այդ խնդրին և որոշ հարցեր դիտել նոր տեսանկյունով։ Նյութի խորազնին քննությունից պարզվում է, որ թեպետ մոնղոլների տիրապետության ժամանակ Դվինը կորցրեց հզոր քաղաքի փայլն ու նշանակությունը, բայց իրրև բնակավայր պահպանեց իր գոյությունը[2]։

Հարցի ուսումնասիրության համար հետաքրքիր են մոնղոլական շրջանից պահպանված վիմական արձանագրությունները, գրավոր աղբյուրները և մասնավորապես հնագիտական նյութը։ Այսպես, հանրահայտ է, որ մոնղոլական տիրապետության ժամանակ Օրբելյաններն իրենց վարած ճկուն քաղաքականության շնորհիվ կարողացել էին ոչ միայն Սյունիքը պահել իրենց ձեռքին, այլև, ընդարձակ տարածություններ գրավելով, նվաճել անգամ Գառնին և Դվինը։ Դարաբասի (նախկինում՝ Ըզուերծ) ս. Աստվածածին եկեղեցու պատին փորագրված 1273 թ. արձանագրության մեջ «Բարոն» Տարսայիճը իրեն հռչակում է «Կողմնակալ յայսմ նահանգի՝ Սիւնեաց... Ի Բարկուշատայ մինչև ի դաշտն Դվնայ»[3]։ Օշականի XIV դ. արձանագրության մեջ հիշատակվում է ոմն դվինցի. «Թվ ՉԺԴ ես Գաւաղոնս (գաւազոն) Դվինացի կանգնեցի սուրբ նշանս Բարեխաւս դստեր իմոյ Նաւռուզին, որ փոխեցաւ ի Քրիստոս»[4]։

Դվինի բնակավայրի գոյության և նյութական մշակույթի ուսումնասիրության համար էական են դրումները, որոնք հայտնաբերվել են միջնաբերդի արևմտյան լանջի 1981—1982 թթ. պեղումների ժամանակ (1247 թ. պատկանել են Դավիթ Ուլու թագավորին, գտնվել են հարավային բուրգի շրջանում, 60 սմ խորությունից)։ Հետաքրքիր է միջնաբերդի շնարակած և հախճապակե խեցեղենի ոչ մեծ հավաքածոն, որը ամենավերին՝ XIII դ. երկրորդ կեսի շերտերից է և ուսի իր անմիջական զուգահեռները համաժամանակյա հայկական այլ կենտրոններում՝ Անիում, Սպիտակում, Հառիճում, Լոռի Բերդում, Գառնիում, Մարմաշենում, Սառնաղբյուրում և Վրաստանի

---

1 Ղ. Գ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 263։ Բ. Ն. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., հ. 2, Երևան, 1964, էջ 84։

2 Այդ առիթով Ա. Քալանթարյանը դրում է. «Սակայն այն տեսակետը, թե Դվինը դադարել է գոյություն ունենալ անմիջապես մոնղոլների արշավանքից հետո, քիչ. հավանական է։ Ճարտարապետական մնացորդները և հնագիտական նյութերը ցույց են տալիս, որ քաղաքում կյանքը շարունակվել է ևս մի քանի տասնամյակ և, ըստ երևույթին, այն պատմական ասպարեզից դուրս է եկել XIII դ. 50—60-ական թվականներին [տե՛ս Ա. Ա. Քալանթարյան, Դվինի 1981—1982 թթ. պեղումների արդյունքները (ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1986, № 3, էջ 92)]։

3 Տե՛ս Դիվան հայ վիմագրության, հ. 2, Երևան, 1960, էջ 114։

4 Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 191։

միջնադարյան հնավայրերում[5]։ Խոսքը վերաբերում է փորագիր եղանակով մշակված բազմադույն անոթներին, որոնք հարդարված են մարդու, կենդանիների և երկրաչափական պատկերներով (տախտ. II, նկ. 22)։ Շատ դեպ-



Տախտակ I։

քերում հիշյալ խեցեղենը ակնհայտ ընդհանրություններ ունի Մերձավոր արևելքի տյալ երկրներում տարածված զարդաձևերի մանրամասների հետ, բայց հիմնականում տիրապետողը կերպավորման տեղական ավանդական ոճն է։

[5] М. Н. Мицишвили, Производство поливной керамики средневекового Тбилиси, Тбилиси, 1979, табл. XXIX, XXX.

Հայաստանի քաղաքական կյանքի անկումը XIII դ. վերջին և XIV դ., անկասկած, իր արտահայտությունն է գտել նաև տնտեսական ոլորտում։ Ինչ խոսք, արհեստավորները ստեղծագործական նոր որոնումների շնորհիվ կարողացան մշակել մատչելի հնարներով գեղարվեստական երբաճաշակ առար-



Տախտակ II։

կաներ ստանալու եղանակները, բայց արտադրության ընդհանուր անկումային միտումը ակնառու էր։ Հախճապակու առավել տարածուն և գործածական տիպը, ինչպես երևում է, մուգ կապույտ երանգով (կոբալտով) ենթաջնարակային եղանակով մշակված անոթներն էին, հիմնականում բուսական կամ

երկրաչափական զարդերով։ Խեցեղենի այդօրինակ նմուշները հայտնի են Դաունիում, Ամբերդում, Անիում[6], Դվինի հարավային բուրգի տարածքում և Տիկնունի ամրոցի XIII—XIV դդ. շերտերում բազմաբնույթ հախճասալերի հետ* (տախտ. I, նկ. 23, տախտ. II, նկ. 21, 21ա)։

Դվինի շուրջ 50-ամյա պեղումները ի հայտ են բերել աշխարհիկ ճարտարապետական շինությունները հարդարելու բազմաթիվ առարկաներ՝ ձուլածո գիպսեր, տերրակոտաներ, որմնանկարներ և այլն։ Հախճասալերի բացակայությունը շենքերի հարդարման մեջ մինչև օրս, զարմանալիորեն, մնում է անբացատրելի։ Անկասկած, քաղաքի, որը պատմական, առևտրական և մշակութային բազմապիսի թելերով կապված է Մերձավոր արևելքի այլ երկրների՝ հատկապես Պարսկաստանի հետ, բնակարանների հարդարման անբաժան մասը պիտի կազմեր շքաղյուսը, այն է՝ շողուն տեսակը։ Հ. Օրբելու և Ա. Յակոբսոնի՝ ժամանակին հայտնած այն տեսակետը, թե մուսուլմանական աշխարհին բնորոշ կիրառական արվեստի այս բնագավառի ակունքները պետք է որոնել հայկական միջավայրում, միանգամայն օրինաչափ է, երբ դիտարկում ենք XI դ. հայկական կոթողներում խաչաձև, բազմանկյուն և աստղաձև քանդակների զուտ հայկական նկարագիրը[7]։ Սակայն XIII—XIV դդ. այս երևույթը քիչ այլ կերպ ենք բացատրում։ Հայաստանն այդ դարերում, կորցներով իր պետականությունը, բնականաբար, ենթարկվեց օտարամուտ ճաշակին, որն առաջին հերթին արտահայտվեց աշխարհիկ շինությունների հարդարանքում՝ հայկական միջավայրին և գեղագիտական ճաշակին միանգամայն խորթ հախճասալերի լայն գործածությամբ[8]։ 1984 թ. Դվինից հյուսիս գտնվող Տիկնունի ամրոցի պեղումների ժամանակ հայտնաբերվել է հարուստ տեսակներով ներկայացված հախճասալերի մի մեծ ժողովածու[9]։ Ամրոցի հիմնադրման և գոյատևման մասին մեր գիտելիքները, առհասարակ, կցկտուր են։ Առաջին հիշատակությունը կապվում է Խոսրով Կոտակ թագավորի կողմից Արշակունիների նստոցը Արտաշատից Դվին տեղափոխելու հետ, IV դ. 30-ական թվականներին[10]։

Մյուս վկայությունը կապվում է Մուհամեդ Իբն Շեդդատի՝ Դվինում հաստատվելու և նրա կողմից Տիկնունիում շինարարական գործունեություն ծավալելու հետ. «Իսկ Մուհամեդ Իբն Շադդատ հաղթական վերադարձավ Դարիլ՝(Դվին) քաղաքը և օգնություն խնդրեց բնակչությունից, ստեղծելու քա-

---

6 Ա. Ս. Ծամկոլյան, Միջնադարյան Հայաստանի հախճապակին IX—XIV դդ. (Հայաստանի հնագիտական հուշարձանները 10, Միջնադարյան հուշարձաններ, պր. 3, Երևան, 1981, էջ 126, աղ. 9, № 2, 3, 5, 6, 7, 8), Հ. Պետրոսյան, Գառնիի ենթաշնարակային նկարազարդումով խեցեղենը [Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև ՊԲՀ), 1982, № 4, նկ. 1, 2],

* Ընդհանրապես, վերոհիշյալ խեցեղենը լայն տարածում գտավ մոնղոլական տիրապետության ընդարձակ տարածքի բոլոր այն երկրներում, որոնք ունեին մշակութային հին ավանդներ, իսկ նկատելի որակական տարբերությունները պայմանավորված էին սոսկ տեղական հումքի առկայությամբ և վարպետների անհատական մասնագիտական հմտությամբ։ Ուսումնասիրվող ժամանակաշրջանի մշակութային պատկերն ամբողջացնելու առումով զգալի նշանակություն են ձեռք բերում Տիկնունի ամրոցի պեղումներից հայտնաբերված ճարտարապետական հարդարանքի մնացորդները։

7 И. А. Орбели, Мусульманские изразцы (Избранные труды, Ереван, 1963. с. 262); А. Л. Якобсон, Очерки истории зодчества Армении V—XVIII вв., М.—Л., 1950, с. 99.

8 Հախճասալերը այնքան լայն գործածություն ունեցան, որ տեղադրվում էին անգամ հոգևոր շինություններում [տե՛ս Ա. Ծամկոլյան, նշվ. աշխ., էջ 129, Ա. Ծամկոլյան, Ա. Քալանթարյան, Եղվարդի ս. Աստվածածին եկեղեցու հախճասալերը (ՊԲՀ, 1971, № 4, էջ 277—281)],

9 Պեղումները կատարել է Դվինի արշավախմբի մի ջոկատը Հ. Եսայանի ղեկավարությամբ։

10 Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1933, էջ 29—30։

զաքին մոտիկ մի այնպիսի վայր, որտեղ կապաստանեին իր մարդիկ և իրենց երեխաները, երբ լեզգիների կողմից սպառնալիք լիներ։ Եվ նրան օգնեց քաղաքի ժողովուրդը։ Եվ նա նրանց օգնությամբ կառուցեց ք. ամրոց և այն անվանեց «Մրջունի բլուր» և այնտեղ տեղափոխեց իր ընտանիքը։ Սա գտնվում է Դարբիլից ձայնընկեցի հեռավորության վրա»[11]։ Այս փաստից ելնելով, Ա. Տեր-Ղևոնդյանը հիշյալ ամրոցը համարում է Տիկնունին, որին միանգամայն համակարծիք ենք[12]։

Ամրոցի հետագա ճակատագրի վերաբերյալ գաղափար ենք կազմում սոսկ հնագիտական նյութերով և տեղում պահպանված ճարտարապետական մնացորդներով։ Ամենայն հավանականությամբ, ամրոցը Մոնղոլների տիրապետության ժամանակ կառուցապատվել է նոր, այնպիսի շինություններով, որոնց հարդարանքի անբաժան մասը կազմել են հախճասալերն ու գիպսե զարդերը։ Հանրահայտ է, որ Հայաստանի մոնղոլական տիրապետության շրջանի աշխարհիկ շինարարական կառույցներն առ այսօր ուսումնասիրված չեն։ Մասնակի հիշատակություններ կան Կիրակոս Գանձակեցու երկում։ Մատենագիրը տվյալ ժամանակաշրջանի կենցաղի հարցեր շոշափելիս հպանցիկ անդրադառնում է նաև կառույցների ներքին և արտաքին հարդարանքին, ինչպես՝ «Այլ և տունս մեծամեծս կոց շինեաց՝ անդր գոմարեալ զամենայն արուեստավորս, քարանց և փայտից և նկարուց...»[13]։ Մեկ այլ տեղում կարդում ենք. «Վասն որոյ զտաճար կոց նոցա առավել մեծարգի յորդորէր»[14]։

Մատենագիրը շատ ավելի պատկերավոր է նկարագրում Օրբելյանների մասնակցությունը Հուլավու խանի ամառանոց-նստոցի՝ Դարան դաշտի շինարարությանը, որով հստակ են դառնում մոնղոլների աշխարհիկ շինարարական գործունեության որոշ դրվագներ[15]։ Մեր տրամադրության տակ եղած նյութը հախճասալերի բեկորներ են, որոնք հանդես են գալիս հարուստ տեսականիով և զուգահեռներ ունեն Մերձվոլգյան (Սարայ-Բերկե, Սարայ Բաթու), միջինասիական (Ուրգենչ) և Փայտակարանի համաժամանակյա մշակույթում։ Մի քանի տասնյակների հասնող բազմանկյուն, աստղաձև և այլ տիպի շքաղյուսներին բնորոշ են կոբալտի խիտ ու մեղմ երանգները կամ փիրուզագույնը, որոնք ընդհանուր խճանկարում ստեղծում են գեղեցիկ ու պայծառ մի գունաշար։ Հիշենք, որ XII—XIII դդ. Իրանում և Մերձավոր Արևելքի այլ երկրներում հախճասալերը լայն կիրառություն ունեին, և սյուժետային ու դեկորատիվ զարդերը արվում էին հիմնականում շողուն ջնարակով[16]։ Կոբալտի գործածությունը հախճապակու արտադրության մեջ հայտնի է IX դ., բայց իբրև նոր գունատ լայնորեն տարածվեց XII—XIII դդ. ու այնուհետև տիրապետող դարձավ XVIII դ.։ Ոմանք այս փոփոխությունը բացատրում են տեխնոլոգիական պատճառներով։ Այդ տեսակետի համաձայն XIII դ. երկրորդ կեսից, երբ կաոլինի և դաշտային շպատի խառնուրդից ստացվեց նոր խեցի, ալկալիական ջնարակների գործածությունը, շատ ավելի նպատակահարմար դարձավ, քանի որ խնայող միջոցներով ստացվում էին ճոխ, հստակ զարդերով գեղեցիկ անոթներ[17]։ Այս պատճառաբանությունը միանգամայն հիմնավորված է, ավելացնենք միայն, որ կապույտը մոնղոլական

---

11 V. Minorsky. Studies in Caucasian history. London, 1953. Arabic text, p. 1.

12 Տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 167։

13 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 39։

14 Նույն տեղում։

15 Նույն տեղում, էջ 396։

16 Տե՛ս M. Bahrami, La reconstruction des caravanes de Damghane d'après leurs inscriptions (Конгресс по иранскому искусству и археологии, М—Л., 1939, p. 18, pl. XVI).

17 Э. Сайко, Среднеазиатская глазурованная керамика XII—XV вв., Душанбе. 1969, с. 119.

հավատալիքներում արտահայտում էր հավիտենական երկնքի գաղափարը[18]։ Չպետք է անտեսել և այն, որ կապույտը մոնղոլական իշխանության խորհրդանիշն էր, որովհետև Բաթու խանի տիրապետության սահմաններն անվանում էին Ակ Օրդա (Սպիտակ Օրդա), իսկ նրա հպատակները Քոք Օրդա (Կապույտ Օրդա)[19]։ Հիշենք նաև, որ մոնղոլներն իրենց ընդարձակ տիրապետության սահմանները բաժանել էին աշխարհագրական տարածքների, յուրաքանչյուրին հատկացնելով գունային մի որոշակիություն։ Այդ սկզբունքի համաձայն Արևելքը հիշատակվում է կապույտ երանգով[20]։ Եվ վերջապես, կապույտն ու սևը ամեն տեսակ լուսավորության դեպքում կայուն պահպանում էին իրենց ներդաշնակ երանգները։

Ուսումնասիրվող հախճասալերը արտաքին ձևերով և հարդարման առանձնահատկություններով բաժանվում են մի քանի խմբերի.

ա) Առաջին խումբը կազմում են բաց երկնագույն, ուռուցիկ զարդաձևերով հախճասալերը (աստղեր, ծաղիկներ, երկրաչափական պատկերներ), որոնց հարդարանքը տրվում էր թաց խեցու վրա՝ համապատասխան դրոշմակնիքների միջոցով, ապա ջնարակելուց հետո թրծվում։ Այդպիսի հախճասալեր հայտնի են ինչպես Ոսկե Հորդայի, այնպես էլ Գառնիի պեղումներից[21] (տախտ. I, նկ. 2, 2ա, 2բ)։

բ) Երկրորդ խմբի հախճասալերը ուղղանկյուն տախտակներ են, որոնցով ձևավորվել է վերին երիզաշարը։ Պահպանված բեկորները մշակված են սպիտակ, մանիշակագույն, կապույտ և այլ աշխույժ երանգներով։

Զարդերի մեջ տիրապետող են հանգույցները, գալարապտույտները, ճոխ ոստերն ու կիսաշրջանաձև աղեղները, որոնք բնության իրական սյուժեների ոճական արտահայտություններն են՝ ամփոփված մի ամբողջական համակարգում։ Այս զարդամոտիվները կրկնողության ռիթմին չեն ենթարկվում, այլ զարգանում են՝ պայմանավորված առարկայի ազատ տարածության հնարավորություններով (տախտ. I, նկ. 1)։ Երբեմն զարդերը հանդես են դալիս հնուց ծանոթ հորինվածքների նորովի մշակումների տեսքով։ Իհարկե, այդ պարագայում նկարազարդող վարպետը երբեք չէր մոռանում կանոնիկ և դեկորատիվ զարդերին հաղորդել ժամանակի դեղագիտական ճաշակի շունչը։

գ) Ճոխ են ներկայացված բաղմանկյուն, աստղաձև այն հախճասալերը, որոնք մշակված են ենթաջնարակային եղանակով։ Զարդերի մեջ տիրապետողը բուսական, երկրաչափական պատկերներն են և արձանագրությունները, որոնք բոլորում են առարկայի եզրերը լայն կամ նեղ ժապավենի տեսքով (տախտ. I, նկ. 5, 5ա, 20, 20բ, գ, դ, ե, զ)։ Արձանագրությունները հիմնականում արված են կրկնակի եզրագծերով, թեև կան ձեռագրատիպ ոճով հիշատակություններ։ Հախճասալերի գեղարվեստական ձևավորման մանրակրկիտ ուսումնասիրությունը արևելագետ Լ. Գյուզալյանին հանգեցրել է այն եզրակացության, որ շատ դեպքերում նկարիչ վարպետը, բանասիրական կցկտուր գիտելիքներ ունենալով, առարկայի վրա արձանագրում էր իր հիշողության մեջ պահպանված գեղարվեստական ստեղծագործության որևէ հատվածը կամ տողը, որը հաճախ ստացվում էր անկապ մի արտահայտություն և չէր համապատասխանում պատկերի բովանդակությանը[22]։ Սա, իհարկե,

---

18 Տե՛ս Լ. Բարայան, Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII—XIV դդ. Երևան, 1964, էջ 144։

19 В. Л. Егоров, Историческая география Золотой Орды в XIII—XIV вв., М., 1985, с. 160.

20 Р. Г. Кузиев, Происхождение башкирского народа, М., 1974, с. 81.

21 Л. Л. Галкин, Несколько изразцов из Селитренного городища [Советская археология (այսուհետև՝ СА, 1968, № 3, с. 242, табл. 1, фиг. 3)]. Ա. Ժամկոչյան, նշվ. աշխ., էջ 133։

22 Л. Т. Гюзальян, Иранские изразцы на барабане храма в Егварде (ՊԲՀ, 1984, № 2, էջ 173)։

ղուկայական մեծ պահանջարկից բխող երևույթ էր, որը գուցե վերաբերում էր նաև Տիկնունիում հայտնաբերված վերոհիշյալ հախճասալերին։ Այնուհանդերձ, արձանագրություններից նպատակն էր տվյալ սրահում ստեղծել զվարթ տրամադրություն։

գ) Շքաղյուսների այս խմբի համար ևս հատկանշական է բուսական զարդամոտիվը, բայց նախորդի բարդ կոմպոզիցիաները միանգամից անհետանում են։ Նկատելի են նոսր ծաղկազարդ մոտիվներ կամ տերևափնջեր և պարզ զարդերից զուրկ եզրագոտիներ։ Ծաղիկների մեծ մասը վերարտադրված է ծավալուն շքաղյուսի ողջ դաշտով մեկ և օժտված ճոխ ծաղկաթերթերով ու ամուր ուղղաձիգ ցողունով։ Քիչ չեն նաև այն ծաղկազարդ և տերևազարդ մոտիվները, որոնք պատկերվում են եռաճյուղ աղեղների մեջ կամ աստղաձև զարդի թևերին։ Ընդհանուր առմամբ շքաղյուսները հարդարող հիմնական մոտիվը տերևն է, որը ստեղծագործող վարպետի վառ երևակայությամբ վերածվում է բազում հորինվածքների (տախտ. I, նկ. 3, 3ա, 4, 7)։ Ծաղկազարդ շքաղյուսների որոշ նմուշներ կրում են կրկնակի կամարների մեջ ծաղկաշղթայաձև բուսաղարդերի հետաքրքիր լուծումներ, ուր դարձյալ հիմնական կրկնվող մոտիվը եռաթերթ ծաղիկն ու պարզ տերևն են։ Պատկերի ընդհանուր աշխուժությունը ստացվում էր զվարթ երանգների կիրառությամբ (տախտ. I, նկ. 5, 5ա, 6)։

ե) Գեղարվեստական յուրովի ձևավորում ունեն «տաուլի» կոչված հախճասալերը։ Շեղանկյուն այլ հախճասալերի համադրությամբ դրանք տեղադրվում էին տախտակադրվագի որոշակի հատվածում և գույների ներդաշնակ խաղով աշխուժացնում խճանկարի միապաղաղությունը (տախտ. II, նկ. 16)։

զ) Հախճասալերի մի այլ խումբ հանդես է գալիս քառանկյունի սալերի տեսքով, որոնց միացումից ստեղծվում էին բազմանկյուն հետաքրքիր պատկերներ (տախտ. II, նկ. 17)։

է) Շքաղյուսների մի այլ խմբի հորինվածքը ուղղանկյուն թևերով աստղի ձև ունի և ամբողջանում է թևերի համաչափ ուղղանկյան մեջտեղը սուրանկյուն երկու սալիկների միացումից (տախտ. II, նկ. 10, 19)։ Հախճասալերի այս բազմազանության մեջ առանձնանում են երկրաչափական ձևավոր ձողիկներ, ծաղիկներ, որոնք Գիրեխի* (տախտ. II, նկ. 12, 13, 14, 15) հորինվածքային սկզբունքով ստեղծում էին մի նոր առանձնահատուկ խճապատկեր։ Նմանատիպ տախտակադրվագների բեկորներ են հայտնաբերվել Ոսկե Հորդայի, Փայտակարանի և միջինասիական XIII—XIV դդ. հուշարձաններում և շատ դեպքերում վերականգնվել են[23]։

Ձևավոր ձողիկներով կառուցված տախտակադրվագները տեխնիկապես շատ աշխատատար էին, ուստի ճարտարապետական հարդարանքի այսպիսի ձևերը կիրառական այն լայն ասպարեզը չունեցան, ինչպես սովորական հախճասալերը։

Ընդհանրացնելով, ասենք, որ Տիկնունիում առկա էին երկու տիպի տախտակադրվագներ՝ հախճասալերով և ձևավոր ձողիկներով հորինված (աղ. I, գծ. 1)։

Արդ, որտե՞ղ են պատրաստվել Տիկնունու հախճասալերը։ Ոսկե Հորդայում նույնատիպ հախճասալերը ընդունվում են իբրև Խորեզմից և Ուրդենչից ներմուծված։ Այս կարծիքը մեծապես հենվում է այն իրողության վրա, որ երկու հնավայրերի հախճասալերն աչքի են ընկնում չափազանց մեծ նմանությամբ։ Բացի այդ, մերձվոլգյան շրջանները մինչ մոնղոլների արշավանքները գրեթե զուրկ էին խեցեգործական ավանդույթներից[24]։

* Գիրեխը երկրաչափական պատկերից միահյուսված բարդ զարդաձև է (տե՛ս Н. А. Саркисов. Архитектурная керамика Азербайджана (автореферат канд. дисс., Л., 1965, с. 17).

23 А. С. Воскресенский. Полихромные майолики Золотоордынского Поволжья (СА, 1967, № 2, табл. 1, рис. 10, с. 86—87).

24 Г. А. Феодоров-Давыдов, Общественный строй Золотой Орды, М., 1973,

Հայաստանը հախճասալեր ներմուծելու անհրաժեշտություն չուներ, քանի որ հնուց երկրում հայտնի էին հումքի հարուստ պաշարներ, իսկ արհեստագործությունը բարձր մակարդակի էր։

Ամփոփենք, որ մոնղոլները նվաճված երկրներում գիտակցական վե-



Նկ.1։

с. 77; Т. В. Скоробогатова, Одна из групп золотоордынской художественной керамики XIV в., (СА, 1983, № 2, с. 93).

բաբերմունք էին ցուցաբերում հատկապես արհեստավորների հանդեպ։ Այդ մասին աղբյուրներում պահպանվել են հավաստի փաստեր։ Այսպես, օրինակ, Մերվը (Միջին Ասիա) նվաճելուց հետո մոնղոլները բնաջնջեցին ողջ բնակչությունը՝ բացառությամբ 400 արհեստավորի և երեխաների[25]։ Մոնղոլների տիրապետության ժամանակ արհեստավորների նյութական, բարոյական և իրավական վիճակի մասին ավելի ստույգ տեղեկություններ են հաղորդում Պլանո Կարպինին և Ռուբրուկը՝ նկարագրելով հատկապես քաղաքներում բնակվող արհեստավորների կենցաղն ու նրանց զբաղեցրած դիրքը[26]։ Պետք է մտածել, որ հայկական միջավայրում արհեստավորները ևս զուրկ չէին որոշակի իրավունքներից։



գծ. 1։

Գառնիում տվյալ ժամանակաշրջանի հախճասալերը ուսումնասիրված են[27], և Տիկնունի ամրոցից հայտնաբերված օրինակների հետ համեմատությունը ակնհայտ է դարձնում գունաշարի մեծ ընդհանրությունը, թեպետ զարդերի և արտաքին ձևավորման տարբերությունը զգալի է։ Հետևաբար, կարելի է ասել, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում գործում էին առայժմ մեզ հայտնի խեցեգործական երկու օջախներ՝ Գառնիում և Տիկնունիում։

Տիկնունիում հայտնաբերված ճարտարապետական հարդարանքի մյուս տեսակներին ձուլածո գիպսերն են, որոնք հայտնաբերվել են բեկորային վիճակում։ Որոշակի կանոնիկ սկզբունքով փորագրված տառերը գեղարվեստական հետաքրքիր լուծում ունեն և շատ նման են այդ առումով Դվինի կենտրոնական թաղամասի X դ. շերտից գտնված գիպսե նյութերին (սակայն տառերը փորագրված են լայն գծերով, հավասար բարձրությամբ և միանգամայն համապատասխանում են XIII—XIV դդ. գրելաոճին)[28] (տախտ. II, նկ. 23, ա, բ, գ, դ)։ Գիպսե զարդերից մեկի վրա փորագրված է եռաթերթ կակաչ հիշեցնող մի նուրբ ծաղիկ (տախտ. II, նկ. 18), որի նմանակը հանդիպում է ձևավոր ծաղկազարդերով հախճասալերի օրինակներում (տախտ. II, նկ. 11)։ Զարգամոտիվային այս մանրամասնը հաստատում է գիպսե զարդերի ու հախճասալերի համաժամանակյա (XIII—XIV դդ.) նյութեր լինելու հանգամանքը։

Հետախուզական պեղումները Տիկնունիում, որոնք կենտրոնացված էին ամրոցի ենթադրվող մուտքի հարավային կողմի հրվանդան կազմող հատվածում ի հայտ բերեցին ընակելի մի կառույցի հարավային (1,1 մ×0,42 մ×

25 Извлечения из Тарих и Джехангута Ала-Ад-джа Джувейти (ТМИТТ I, 1939, с. 491).

26 Путешествия Рубрука и Плано Карпини в Восточные страны. М., 1957, с. 58.

27 Ա. Ժամկոչյան, նշվ. աշխ., էջ 126, 2. Պետրոսյան, նշվ. հոդվ., նկ. 1, 2։

28 Նման արձանագրություններ հանդիպում են նույն ժամանակաշրջանի խեցեղեն նմուշներում (տե՛ս Т. В. Скоробогатова, նշվ. աշխ., էջ 98, Н. Н. Вактурская, Классификация средневековой керамики Хорезма IX—XVIII вв. (Труды Хорезмской археологнческо-этнографнческой экспедиции, т. IV, Ташкент, 1959, рис. 34, 35); П. Агапов, М. Кадырбаев, Сокровища древнего Казахстана, Алма-Ата, 1979, с. 193, рис. 10—11.

×0,30 մ) և արևմտյան պատերը (1,68 մ×0,69 մ×0,20 մ), թրծած աղյուսաշար մի հատակ՝ 6,5 մ×5,5 մ չափերով, ջրատար խողովակ, պատուհանի բաղմագույն ապակիներ, սյան խարիսխ, թրծած աղյուսներով շարված երկշար սուֆա, ինչպես նաև 0,62 մ տրամագծով, 0,25 մ խորությամբ մի թոնիր։ Այս բոլորն, իհարկե, հատակագծային ամբողջություն չկազմեցին, բայց նախապես կարելի է բացված համարել աշխարհիկ ինչ-որ շինության հանդիսավոր բնույթի գարգարուն դահլիճներից մեկը։

Դրանով պիտի բացատրել շքաղյուսների և սուֆայի առկայությունը։ Սուֆաները Միջին Ասիայի[29], Մերձավոր արևելքի և Մերձվոլգյան երկրների քաղաքային ունևոր խավի բնակարանների կարևոր կահկարասիներից էին[30]։

Այսպիսով, Տիկնունի ամրոցի վերին շերտերից հայտնաբերված շինարարական խեցեղենի քննությունը պարզում է հուշարձանի բնակեցման վերին ժամանակագրական սահմանը (XIII—XIV դդ. հետմոնղոլական շրջան) և նյութական մշակույթի բնույթը, որը շատ կարևոր է հայ ժողովրդի պատմության համեմատաբար քիչ ուսումնասիրված ժամանակաշրջանի տարբեր հարցերի լուսաբանման համար։

ОБРАЗЦЫ АРХИТЕКТУРНОГО УБРАНСТВА ИЗ КРЕПОСТИ ТИКНУНИ

А. С. ЖАМКОЧЯН

Резюме

В результате раскопок крепости Тикнуни в 1984 г. установлено, что крепость была обитаема в XIII—XIV вв., свидетельством чему является обнаружение в одном из парадных залов постройки, расположенной близ предполагаемого входа в крепость, а также скопления разнообразных изразцов. Последние, наряду с резным штуком, в XIII—XIV вв. являлись широко распространенным средством оформления архитектурных интерьеров в Средней Азии, Золотой Орде, а также в Армении (Гарни, Ани, Амберд). Отражая эстетические вкусы эпохи, они обладали также характерными чертами местных культур.

SAMPLES OF ARCHITECTURAL DECORATION FROM THE FORTERESS TIKNUNI

A. S. DŻAMKOCHIAN

Summary

In consequence of excavations of the fortress Tiknuni in 1984 it was ascertained, that the fortress was inhabited in XIII—XIV cc., evidence of which was the discovery in one of the front halls of the building, situated near the assumed enter of the fortress, as well as accumulations of different samples. The latters, with the carved things, in XIII—XIV cc. were largely wide-spread means of decoration of architectural interiors in Middle Asia, the Goldan Horde, as well as in Armenia (Garni, Ani, Amberd). Expressing aesthetic taste of the epoch, they had also characteristic lines of local cultures.

[29] А. Ахраров, Л. Ремпель, Резной штук Афрасиаба IX—X вв., Ташкент, 1971, с. 56.

[30] Г. А. Феодоров-Давыдов, Новый Сарай по раскопкам в 1963—1964, (СА, 1966, № 2, с. 239). Դա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ Նոր Սարայի պեղումների ժամանակ սուֆան իսպառ բացակայում էր շարքային բնակիչների թաղամասերում։